

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԵԶ

Ռիմա Միրումյան
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«...համարձակ կը յայտարարեմ թէ նորէն
Հայութեան վրայ պիտի խոսիմ...
մեք ամենքընիս այսօր կարծես թէ նոր իմաստ մը
տուած ենք այդ բառին, և նոր յոյսեր
կը հաստատեմք անոր վրայ. նոր տեսութիւններ
ունինք անոր բացատրութեան նկատմամբ, և
նոր դիտակէտներ կը սահմանեմք անոր նպատակի մասին»:

Աշխարհաքաղաքական արդի իրավիճակը՝ պայմանավորված երկու հակադիր միտումներով՝ հանուն ազգային անկախության ձեռքբերման հայտնի ազգերի մղած պայքարով և աշխարհով մեկ ծավալվող ինտեգրման գործընթացներով, ժամանակակից քաղաքագիտության անկյունաքարն է դարձրել ազգի հիմնախնդիրը և դրա հետ առնչվող մի շարք հարցեր: Սակայն, երկարամյա բանավեճերը առ այսօր չեն հանգեցրել ազգի մասին հստակ պատկերացումների ձևավորմանը: Ավելին, բազմաթիվ արդի տեսություններում անգամ մերժվում է պատմամշակութային այդ երևույթի գոյության հնարավորությունը: Միևնույն արդի աշխարհում այդքան պահանջված քաղաքակրթությունների երկխոսության կենսագործումը անհրաժեշտորեն ենթադրում է ժամանակակից մշակութային ձևերի համակողմանի զարգացման վեկտորի իմաստավորումը: Դա, իր հերթին, արդի ազգերի հասարակական – մշակութային բնույթի վերաբերյալ քաղաքական - փիլիսոփայական նոր հայացքի ձևավորման անհրաժեշտություն է առաջ քաշում:

Կարծում են, որ տեսական մտածողության մեջ տիրող այս խառնաշփոթը հետևանք է ազգի հիմնախնդրի մեջ հետազոտման բազմաթիվ մակարդակների (պատմամշակութային, հասարակական – տնտեսական, պետական քաղաքականության, աշխարհաքաղաքական, համաշխարհա-

կանացման և այլն) առանձնացման անկարողության կամ չկամության: Միաժամանակ խնդրո առարկային լուծում տալու համար այն պետք է նախ ուսումնասիրվի փիլիսոփայա-քաղաքական ռեֆլեքսիայի մակարդակում: Միայն այդ ճանապարհին է հնարավոր հաղթահարել արդի հասարակագիտության (ինչպես նաև ցանկացած գիտության) հատվածական բնույթը, ինչը, անշուշտ, խոչընդոտում է հետազոտական կարևորագույն հիմնախնդիրների լրջմիտ և համակողմանի վերլուծությանը: Արդյունքում բաց են մնում ինչպես ակադեմիական, այնպես էլ ակտուալ քաղաքականության համար կարևոր նշանակություն ունեցող հարցեր (ազգերի ձևավորման գործընթացի, «ազգ» և «ազգայնականություն» շաղկապված հասկացությունների իմաստային բովանդակության և այլնի վերաբերյալ):

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար նախ պետք է ընտրել հիմնախնդրի վերլուծության գործիքը, այն է՝ ելակետային հասկացությունը, արգելակելու համար արդեն հիշատակված «ազգ» և «ազգայնականություն» հասկացությունների «անվերահսկելի» կիրառությունը: Նման գործիքի դեր կարող է կատարել «ազգային ինքնություն» հասկացությունը: Վերջինս այսօր «կոչված» է փոխարինելու նոր ժամանակաշրջանի փիլիսոփայա-քաղաքական մտքի պատմության մեջ ձևավորված «ազգի գաղափար» (ֆրանսիական ավանդույթ) և «ժողովրդի ոգի» (գերմանական ավանդույթ) հասկացությունները: Ազգային գաղափարն ու ազգային ոգին, ըստ էության, ազգային հոգեմտակերպի արտահայտման ձևերն են: Ազգի գաղափարը ազգային համակեցության առանձնահատկության և միասնականության իմաստավորմամբ մարդու ինքնատյանացման ձև է: Ինչ վերաբերում է ժողովրդի ոգուն, ապա այն սահմանվում է իբրև բնույթով ազգային որոշակի մշակույթի (ղրա ձևերի ողջ զանազանության մեջ) միասնության արտահայտության¹:

XIX դարի հայ փիլիսոփայա - քաղաքական մտքում կիրառվող «ազգային ինքնատիպություն» հասկացությունը բովանդակում է «ազգային գաղափար» և «ժողովրդի ոգի» հասկացությունների ներքինաստիճան: Նույնացումը, իր հերթին, մարդու հասարակայնացման բարձրագույն ձևն է, սեփական պատմության և մշակույթի դաշտի մեջ մարդու՝ իբրև որոշակի հասարակության անդամի, ներգրման կարևորագույն միջոցը:

Ակնհայտ է, որ իբրև ելակետային՝ «ազգային ինքնություն» հասկացության կիրառմամբ հնարավոր է իմաստավորել Արդիականության կարևորագույն հարցերը՝ ի՞նչ են իրենցից ներկայացնում արդի ազգերը, ինչպե՞ս է հնարավոր քաղաքակրթությունների երկխոսությունը, որո՞նք են համաշխարհականացման հետևանքով արդի պետություններին սպառնացող հակասությունները: Ինքնանույնացման ճգնաժամի վտանգն այսօր սպառնում է նաև Հայաստանին, քանզի մեզանում նկատելի է ազատակա-նության քաղաքական - գաղափարախոսական արժեքներով հայ ազգային ինքնության արժեքների փոխարինման միտումը:

Ինքնանույնացումը մարդկային ոգու հիմնարար երևույթներից մեկն է՝ սերտաճած երկրի պատմության և մշակույթի մեջ, ուստի օրինաչափական է, որ լինելով ցանկացած ազգի քաղաքական մտքի կարևորագույն հարցերից մեկը, ազգի հիմնախնդիրը առանցքային է դառնում ազգային պետականությունից զրկված ազգերի քաղաքական մտքում: Այդ իսկ պատճառով խնդրո առարկայի քննումը հարկ է սկսել ազգային քաղաքական մտքի պատմության մեջ ամրագրված գաղափարադրույթների ու մտակառույցների վերլուծությունից:

Այս տեսանկյունից ուշագրավ է XIX դարի երկրորդ կեսի - XX դարի սկզբի հայ կրոնական մտածող, ազգային ազատագրական պայքարի գաղափարախոս, հայ պահպանողականության ակնառու ներկայացուցիչ Մաղաքիա Օրմանյանի մտորումները, ազգի հիմնախնդրի վերաբերյալ: Այդ մտորումների առանցքն են կազմում ազգային ինքնության (ինքնատիպության) բնութագրումը և դրանով պայմանավորված՝ հայ ազգի քաղաքակրթական առաքելությունը:

Իբրև ելակետային Մ. Օրմանյանը ընտրում է «Հայություն» հասկացությունը, որի իմաստային բովանդակությունը ազգի պատմական գոյության ողջ ընթացքում հայի հոգեմտակերպի միջուկն է կազմում և ընդունակ է փոխակերպվել ժամանակի պահանջների համեմատ: Ընդ որում «շարժմանց և փոփոխութեանց ալ չափ մը կայ, այդ չափն մասամբ իմն և երբին ընդունակութեան և մասամբ մըն ալ արտաքին պատճառաց գործակցութեան արտադրեալն»²: Արտաքին գործոններն են, մասնավորաբար, ազգերի փոխհարաբերություններն ու օտար պետությունների միջամտությունը: Գլխավորը, սակայն, այն է, որ «Հայս պիտի աշխատիմք

որ Հայութիւնը յառաջադիմէ և զարգանայ»³: Դա ենթադրում է ազգի պահանջների ու պարտականությունների հստակ գիտակցում և ինքնօրէն ապրելու իրավունքի ձեռքբերում: Այդ ձգտումը բնական և արդարացի համարելով՝ Մ. Օրմանյանը, այնուամենայնիվ, գտնում է, որ նախ պետք է ապահովել հայության գոյությունը. «Գոյութիւն՝ ամենայն իրաց առաջին սկիզբն և առաջին պայմանն է, ամենայն կատարելութեանց պատճառ և ամենայն հանգամանաց զլիաւորութիւն. այն աստիճան որ նոյն ինքն Աստուածային մեծ վայելչութիւնն ուրիշ կերպով մը չկրցաւ ամփոփել իւր անհուն ստորոգելեաց տարածութիւնը, բայց եթէ կոչելով զինքն «Որ էն», զի յերթեան անդ՝ որ և գոյութեան, կը պարունակին որչափ ինչ հնար է խորհել կամ երեակայել ի բարեաց և իր բարեմասնութեանց անտի: Հայութեան ալ առաջին ձիրքը իր գոյութիւնը պէտք է որ ըլլայ...պէտք է գոնեա տալ գոյութեան այն նախամեծար առաջնութիւնը՝ որ իրմէ կապտել անհնարին է»⁴:

Մ. Օրմանյանը հաստատում է, որ ազգի պահպանման և զարգացման խնդիրը անանցյալ է ազգի գոյության խնդրից: Նրա համար խնդիրը գոյություն ունեցող ազգի բնութագրման և առկա կեցության պայմանների համեմատ նրա զարգացման հնարավորությունների որոշման մեջ է: Նա մերժում է ժամանակաշրջանի քաղաքական - փիլիսոփայական տեսություններում արծարծվող այն գաղափարը, թէ ազգի գոյությունն ու առաջադիմությունը պայմանավորված է քաղաքական կառույցի (ազգային պետության) առկայությամբ և գտնում, որ նման մոտեցումը բնութագրական է և օրինաչափ եվրոպական ժողովուրդներին, որոնք հիշյալ ժամանակաշրջանում արդեն ունեին ազգային պետականություն: Առավելին, քաղաքակրթությունների բնականոն զարգացման տեսանկյունից նա վտանգավոր է համարում եվրոպական բազմաթիվ պետություններում տիրող այն իրավիճակը, երբ «բոլոր այն ժողովուրդք, որք իւրաքանչիւր պետութեան էական կամ ամբողջացուցիչ մասերը կը կազմեն՝ **համազգիք կ'անուանին, առանց խտրելու** թէ զանազան ժողովուրդ էն, զանազան լեզու ունին և զանազան յատկութիւններ...»⁵: Մյուս կողմից, ազգերը կարող են կործանվել ու ոչնչանալ անզամ սեփական պետականության առկայության պայմաններում: Պատճառն այն է, որ ազգերի ձևավորումը մտածողը ոչ թէ արհեստական (քաղաքական), այլ

բնապատմական երևույթ է համարում: Նրա պնդմամբ պատմության մեջ տեղի ունեցած ազգերի հզորացման, թուլացման, ձուլման և կործանման բազմաթիվ փոքրերը չեն հանգեցրել նոր ազգի (ազգերի) ձևավորմանը: Դրանով է բացատրելի այն հանգամանքը, որ ազգի գոյության էական հատկանիշը նա համարում է ազգային «աանդությունը»՝ պատմությունն ու մշակույթը: Հենց ազգի պատմամշակութային ավանդույթն է ստեղծում հոգևոր այն հզոր դաշտը, որը նպաստում է ազգի գոյատևմանն ու զարգացմանը, քանզի այդ դաշտում է հնարավոր ապահովել ազգի գոյատևման համար անհրաժեշտ ազգային զգացման (հայրենասիրության) առաջացումն ու հզորացումը:

Հայ մտածողը նշում է, որ եթե «մեզ ծանօթ սրբազան կամ արտաքին պատմագրաց վրայ յեևումք, և այժմեան ազգայնօսից գիտնական զննութեանց հետեւանքն իսկ ի նկատի առնումք, այնպիսի հին հնութեան մը կը հասնի Հայութեան աանդությունը, ուսկից առաւելը և ոչ մի ազգ կրնայ այսօր Հայուն դիմադրել: Այս իսկ շատ է որ ազգի մը գոյութեան կէտը նուիրագործուի, և որք սոյն ազգութեան կըվերաբերին՝ իրենց ազգութեան զգածմամբը մխիթարուին: Պիտի մխիթարուիմք և մեր ամենայն իրաւամբ մեր աանդութեանց յիշատակովը. վասն զի մեր անցելոյն յիշատակը երկու գլխաւոր դասեր կու տայ մեզի. և այս են. առաջին թէ Հայութիւնը ինչ աստիճանի ընդունակութիւններ ունի ազգութեան ասպարեզին մէջ. և երկրորդ թէ Հայութիւնը ինչ աստիճան տեւողականութիւն ունի չարագոշակ արկածից ասպարեզին մէջ: Երկուքն ալ բաւական են ոչ միայն զմեզ մխիթարել, այլ և քաջալերել և ի գործ յորդորել»⁷:

Ազգության մյուս էական հատկանիշը «բազմութիւնը» համարելով, Մ. Օրմանյանը գտնում է, որ հայությունն ունի «այժմ և արդեամբ այնչափ բազմութիւն՝ որչափ կը բաւէ ազգութիւն մը կազմելու, և համարձակ ըսելու թէ Հայութիւնը ազգութիւն մի է»⁸:

Ազգություն կազմելու հաջորդ էական պայմանն է լեզուն՝ ընկերականության հիմքը, այն միակ միջոցը, որով գաղափարների հաղորդակցությամբ գործակցություն է առաջացնում, իսկ «գործակցութենէ յառաջադիմութեան ճամբայ կը բանայ»: Նշվածից հետոնում է, որ «ընկերականութեան առաջին քայլը, արդիւնքը և նշանակետը ազգութիւնն է, որով մարդիկ օրինաւոր և չափաւոր հնարաւոր և շահաւոր սահմաններու մէջ

իրենց ընկերական բնութիւնը կ'իրականացնեն...»⁹: Պատճառն այն է, որ լեզուն ազգի դաստիարակության, կրթության, ստեղծագործության կանոնադրայն կռվանն է:

Ազգության գոյությունը, սակայն, հնարավոր է այն դեպքում միայն, երբ ավանդույթը (պատմությունն ու մշակույթը), մարդկանց բազմությունն ու լեզուն մեկ մարմին են կազմում «աշխարհի» կամ Հայրենիքի հետ: Կա մի երկիր Առաջավոր Ասիայում, նշում է Մ. Օրմանյանը, «ի ծայր նախածանօթ աշխարհայն և ի սկիզբն յետոյ ի ծանօթութիւն եկեալ երկիրներու», և այդ երկիրը Հայության աշխարհն է և հայ ազգության հայրենիքը, որտեղ հայ ազգությունը հաստատվել, ապրել և ստեղծագործել է:

Ազգ կոչվելու համար, այնուամենայնիվ, անհրաժեշտ է ուրույն և սեփական կազմակերպության առկայությունը, որ «իրեն մասնատր կացութիւն մը շնորհէ և իր ներքին գործունեութեան ներքին շարժամբը զարգանալու դիրութիւն ընծայէ»: Հայ մտածողի կարծիքով, Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի և Ազգային ժողովի կառուցվածքն ու գործունեությունը վկայում է այնի մասին, որ հայ ազգության գործունեությունը կառավարվում է ըստ եվրոպական կառավարությունների կողմից որդեգրած օրենքների: Դրանից մտածողը հետևեցնում է. «Եթե այդպիսի կազմակերպութիւն մը օտար ազգաց պարծանքն է՝ և իրենց ներկայ և ապագայ յառաջադիմութեան երաշխաւորութիւնն է, ինչու՞ ուրեմն մեր կազմակերպութիւնն ալ չբաւէ տալ մեզ այն վստահութիւնը և ճշմարտել ի մեզ այն պայմանը, որովք ազգութիւնք կը լինին և կը գործեն»¹⁰:

Մ. Օրմանյանի հաստատմամբ, Հայությունը իրավունք ունի ազգ կոչվելու: Ըստ արևմտյան բազմաթիվ հեղինակների ու քաղաքագետների, ասիական հին ազգերի մեջ Հայությունը «գլխաւոր և երեւելագոյն» տարրն էր կազմում: Այդ իսկ պատճառով Հայության օրակարգում դրված է ոչ թէ հայ ազգության ձևավորման, այլ հաստատման, առաջադիմության և բարգավաճման խնդիրը:

Ազգային կեցության գլխավոր նախասկիզբը պահպանողականը համարում է կրօնը. «կրօնքը ըստ իմաստասիրաց և քաղաքագիտաց՝ պայման մի է բովանդակ իսկ մարդկային ընկերութեան՝ որոյ ազգութիւնք մասունք են, կամ թէ ծնունդք են, անդստին նորին բնութենէ ծագում առած: Ծարդ մարդկային ընկերութիւն առանց կրօնից չէղեւ...»¹¹: Հոգեւորն այս

բանաձևում բնութագրելի է որպես հասարակայնության ոգեշնչման հրամայական, որը խթանում է մարդկային կենսագոյի ներդաշնակեցումն ու լրիվության ապահովումը, այսինքն՝ իմաստավորումը: Նա բացառում է առանց կրոնի հասարակությունների ու ազգերի գոյության հնարավորությունը. «Արդեան և անցեալ աշխարհի դրութեան և սկզբան համեմատ՝ կրօնքը, որ թէ պայման է միայն, այլ առաւել ևս քան զպայման է ընկերութեանց և ազգութեանց. անոնց դայեակն է և խնամակալը և մշտատն յանձանձիշը: Իսկ մեր ազգին վրայ խօսելով ի մասնատրի, և մեր կրօնից վրայ առանձնակի, սոքա երկոքին այնպէս իրարու միացեալ ապրեցան յանցելում, և այնպէս իրարու զուգակցեալ կը մնան յայժմուս, որ մեր կրօնից վնաս ինչ բերել, ուղղակի մեր ազգութեան վնաս բերել է. և ինչ որ ի մեզ կրօնական էր ըստ ինքեան, ազգային եղև և է իրականապէս»¹²:

Հաստատելով կրոնի գաղափարախոսական էությունը, այսինքն՝ այն ընկալելով որպէս ազգը (հասարակությունը) ամրացնող ևախասկիզբ, Մ. Օրմանյանը պնդում է, որ «...այդ հավաքական կամ ժողովրդական միութիւնը՝ Եկեղեցի անունով նշանակուեցաւ որ է ժողով կամ ժողովուրդ, զի ոչ միայն վարդապետութեան, այլ և պաշտամունքի և կենցաղի, և իշխանութեան կենսական տարրներով միաւորուած ու կապուած էր»: Բացի այդ, Հիսուսն է «Եկեղեցւոյ հիմնադիրը. ոչ միայն Շնորհաւոր Եկեղեցւոյ, այլ և իրաքանչիւր մասնատր եկեղեցւոյ զլուխը, և յատկապէս այն եկեղեցիներու, որոնք առաքելական են և անմիջական կերպով Քրիստոսի Առաքեալներէն մէկին կամ միւսին ձեռքով հիմնուած և սկզբնաւորուած են»¹³:

Կրօնական մտածողի համար բնութագրական՝ վերը բերված դիրքորոշումը թույլ է տալիս հաստատելու, որ ևս ձգտում է հակազդել այն իրավիճակին, որում նոր ժամանակի արևմտաեվրոպական գաղափարների (իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն) ազդեցության ներքո դարաշրջանի հայ պաշտամունքականության գաղափարական ընդլիմախոսներ՝ հայ լուսավորիչները ձգտում էին ազգային կեցության քաղաքական և իրավական ոլորտներն առանձնացնել կրօնական պաշանքներից: Այդ հակազդեցությունը համարժեք գնահատելու նկատառումով հարկ է անդրադառնալ մեկ հանգամանքի ևս:

Պահպանողականը քննադատում է հայ լուսավորիչներին՝ հայ ազգի մեջ ժողովրդավարության և իրավական կուլտուրայի ավանդույթները սերմանելու պահանջը այն պատճառով, որ եվրոպական կառավարությունների «հետևած օրենքներն հասարակապես նույն հիմանց վրայ հաստատուած են՝ որոց վրայ և մեր ազգին օրենքները կը հանգչին. անոց ներքին կազմակերպութիւնն ալ տարբեր դրութեան վրայ հաստատեալ չէ. քան ինչ որ մեր ազգը իրեն սեպականած է...»¹⁴: Այս բանաձևով հաստատվում է միտքն այն մասին, որ ժողովրդավարական սկզբունքը Արևմուտքի մեկաշնորհը չէ: Ավելին, հայ ազգային – մշակութային աշխատանքում ձևավորվել են և՛ ժողովրդավարական սկզբունքներ, և՛ իրավական կուլտուրայի ավանդույթներ, ինչի մասին վկայում են Հայ Առաքելական եկեղեցու պատմությունն ու Մահմանադրությունը: Հայ եկեղեցու կազմակերպությունը ժողովրդավարական էր ի սկզբանե: Եվ եթե հասարակական կյանքի կազմակերպման հասարակական ձևը եվրոպական ազգերի պարծանքն է ու առաջադիմության երաշխիքը, ապա ինչու Հայ եկեղեցու կողմից իրագործած նույն սկզբունքը չէր կարող համարվել հայ ազգի ներկայի և ապագայի երշախիքը. «Հայն ստացաւ յայնժամ՝ տեսականապէս ... ինչ որ արդէն ունէր իրականապէս. ծասն զի... «Ազգային Մահմանադրութիւնն Հայոց» ոչ թէ նորագլուխ ինչ է, կամ Հայ ժողովրդեան վարչական ձեւոյն մէջ հիմնական փոփոխութիւն մը, այլ մանաւանդ Հայութեան հոգւոյն պահանջը, որուն իւր ձգտմամբ և ընծիւք կը դիմէր...»¹⁵:

Մ. Օրմանյանի ներկայացրած տեսակետը ևս մեկ անգամ թույլ է տալիս ըմբռնել այն միտքը, որ միայն ազգերի ավանդույթների (այդ թվում՝ նաև կրոնա-եկեղեցական) զարգացման ճանապարհին է հնարավոր քաղաքական ազատության ձեռքբերումը: Հիրավի, Իրավունքի և Պետության ձևավորումը հնարավոր է այն դեպքում, երբ կենսաշունչ է ժողովրդի իրավագիտակցությունը՝ պայմանավորված նրա ստեղծագործական ներունակությամբ և հասարակական կյանքի ավանդույթներով: Ե՛վ առաջինը, և՛ երկրորդն արտահայտվել են Հայ եկեղեցու կառուցվածքի և գործունեության մեջ:

Վերը նշվածից հետևում է, որ ազգային կրոնի պահպանման անհրաժեշտության գիտակցումը պահպանողականի հայեցակետում շաղկապ-

ված է ազգի բարոյական կատարելագործման և հայության «տոհմային միասնության, ազգայնության» պահպանման կարևորության ըմբռնման հետ: Դրանով է բացատրելի նրա կողմից խղճի ազատության մերժումը, որը հիմնավորելի է հետևյալ կանխադրույթներով՝ ազգային միությունը կրոնի միջոցով է հաստատվում (Մի՞թե սիրոյ և միատրութեան և միութեան հաւատքը չէ՞, զոր աւետարանն կը սորվեցնէ ամէն քրիստոնէի, որն և ըլլայ իւր դաստութեան ձեւը):

Վերոհիշյալից հետևաբար է բխեցնել, որ խղճի ազատության սկզբունքը կրոնական մտածողը համարում է ազգը պատակտող սկզբունք: Բնական է, որ նրա համար պետք է դատապարտելի լինէր ազգային միության նոր կենտրոնների՝ Օսմական կայսրության որոշմամբ «Կաթոլիկ» (1830 թ.) և «Բողոքական» (1847 թ.), ինչպես նաև Վ. Զիլինկիրյանի «Լուսավորչական կենտրոնի» (1868 թ.) ստեղծումը: Այդ հաստատությունները ևս անվանում է հայ հանրության անջատված մասեր և գտնում, որ նման բաժանումը ներքևապես տկարացնում է ազգին ոչ միայն եկեղեցական, այլև հակազգային բնույթ ունեցող կաթոլիկ և բողոքական դաստիարակության տեսակետով:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով ազգային կեցության առկա պայմանները, հայ պառնկանդականը այլընտրանքային տարբերակ է առաջարկում: Ելնելով այն համոզումից, որ ազգի անհատականության պահպանման հոգևոր վերածննդի համար անհրաժեշտ է ազգասերների և հայրենասերների միասնություն և ոչ թե ազգի բաժանմանը նպաստող բանավեճերի սաստկացում, Մ. Օրմանյանը առաջարկում է ստեղծել համահայկական կենտրոն. «Մաս մը տեղական, մաս մը ռուսումնական, մաս մը վարչական, և մեծ մաս մըն ալ եկեղեցական, բաղադրեալ կեդրոն մը ձեւացնեմք Հայութեան համար, և այդ բաղադրեալ կեդրոնին ազդեցութիւնը, մեր Հայքս անհատաբար յարգեմք, այնպէս որ ամենայն ինչ՝ որ Հայ է, և ամենայն ոք՝ որ Հայ է, այդ կեդրոնին հետ յարաբերութիւն մը ունենայ»¹⁶: Այս բանաձևի հիմքում դիտելի է մտածողի հետևյալ սկզբունքը՝ «Մենք Հայութիւնը մի ազգ կուգեմք և ոչ մի եկեղեցի»: Դրանով է բացատրելի այն հանգամանքը, որ «ազգ», «ժողովուրդ», «ցեղ» հասկացությունները դարաշրջանի հայ պառնկանդականները օգտագործում են որպես համանման հասկացություններ: Ընդ որում ազգային գերակայու-

յունների սահմանման գլխավոր չափանիշը, նրանց, ինչպես և արդեն հիշատակված հայ լուսավորիչների համար, «էթնիկ» գործոնն է: Հենց հանուն հայի էթնիկ առանձնահատկությունների պահպանման նրանք ձգտում էին ապահովել հայության մշակութային միասնությունը (ազգային Եկեղեցու միջոցով), հակառակ պարագայում՝ «Միասնություն» հոգեբարոյական կարգախոսով:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ստեղծել ազգային կրթության ու դաստիարակության հզոր կառուցակարգ՝ «ազգային ըստ լեզուին, ազգային ըստ նիւթոյն, ազգային ուսմունքն և ազգային ուսուցիչն ալ»¹⁷: Միայն այդ դեպքում ազգի կրթադաստիարակչական համակարգը կարող է նպաստել Հայության հոգևոր ներուսակության բացահայտմանն ու ազգային զգացման (հայրենասիրության) զարգացմանը: Կարելի է եզրակացնել, որ Մ. Օրմանյանի համար հոգևորը իր խորքային էությամբ ազգային է:

Հիրավի, մարդու ինքնաճանաչումն ու աշխարհըմբռնումը անհրաժեշտորեն պայմանավորված է նրա ազգին ներհատուկ աշխարհայացքով: Յուրաքանչյուր զարգացած (քաղաքակրթված) ազգի մշակույթը (լեզու, դպրություն, կրթական համակարգ, կրոն, ավանդույթներ), այդ թվում նաև քաղաքական՝ մշակույթի հիմքում ընկած են նույն ազգի կողմից պատմականորեն մշակված կենսական կողմնորոշիչները, աշխարհզգացողության տարատեսակությունը, որն արտացոլում է այդ ազգի ինքնագիտակցության զարգացման մակարդակը: Ազգի մշակույթը ապահովում է ազգային միության համար անհրաժեշտ կապը, ինչը, իր հերթին, նպաստում է ազգի պատմական հիշողության պահպանումը: Բացի այս, ազգային մշակույթի արժեքները համահարաբերական են այդ մշակույթի կրողների խորքային՝ էմոցիոնալ կարգին:

Այս համատեքստում ըմբռնելի է Մ. Օրմանյանի, ինչպես նաև դարաշրջանի հայ պահպանողականությանը հատուկ միտքն այն մասին, որ ազգային լուսավորությունը (կրթությունն ու դաստիարակությունը) պետք է ուղղորդված լինի ազգային զգացման պահպանմանն ու ամրապնդմանը, հակառակ դեպքում նենգափոխվում է լուսավորության բուն էությունն իսկ: Պատճառն այն է, որ ազգային զգացման պահպանումը ազգի բարձր պարտավորությունն է. ազգությունը ազգի համար բարձրագույն բարօ-

րություն է, հանուն որի պետք է զահաբերվի ոչ միայն անհատական, այլև հասարակական բարօրությունը: Ազգային զգացումը կենդանի պահելու համար լուսավորությունը պետք է ներդաշնակ լինի ազգային կեցության նախահիմքի հետ: Ակնհայտ է, որ պատմական բեմի վրա ազգի հեղինակության հաստատումը, պետությունների քաղաքակրթական կարգավիճակի հաստատումը մշակութային գործոնով է պայմանավորված: Այս գաղափարը արդարացի է ինչպես պատմության նախորդ շրջանների, այնպես էլ արդի աշխարհում նկատելի միտումների համար¹⁶:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Օրմանեան Մ., Հայ ազգութիւն, Կ. Պոլիս, 1880, էջ 5:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, էջ 9:
5. Տես Միրումյան Ռ., Պատմափիլիսոփայական հայեցակարգերը XIX դարի հայ փիլիսոփայության մեջ, Մեթոդաբանական վերլուծություն, Երևան, 2003, էջ 192-193:
6. Օրմանեան Մ., Հայ ազգություն, էջ 12-13:
7. Նույն տեղում, էջ 17:
8. Նույն տեղում, էջ 19:
9. Նույն տեղում, էջ 20:
10. Նույն տեղում, էջ 25:
11. Նույն տեղում, էջ 54:
12. Նույն տեղում, էջ 55:
13. Օրմանեան Մ., Ազգապատում, հ.Ա., Կ. Պոլիս, 1912, էջ 19:
14. Օրմանեան Մ., Հայ ազգութիւն, էջ 25:
15. Օրմանեան Մ., Հայութեան Հոգին, Կ. Պոլիս, 1879, էջ 17:
16. Օրմանեան Մ., Միութիւն Հայութեան, Կ. Պոլիս, 1879, էջ 27:
17. Օրմանեան Մ., Հայութեան հոգին, էջ 19:
18. Sk"u Мирмяян Римма, Армянское культурное наследие как механизм самозащиты нации в условиях глобализации (к вопросу о политической концепции культуры)// Армения в диалоге цивилизаций. Материалы международной научной конференции, 28 апреля 2011г. - Нижний Новгород: Деком, 2011, էջ 83, 90: